ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԳԱՅԻԱՆԷ ՅԱԿՈԲԵԱՆ (gayik20@gmail.com)

ՆԱԽԱԲԱՆ

2011ին սկսուած սուրիական պատերազմի հետեւանքով Հայաստանի Հանրապետութիւն ժամանեցին շուրջ 22,000 սուրիահայեր[1]: Այսօր նրանց թուի վերաբերեալ պաշտօնական տեղեկատուութիւնը բացակայում է, սակայն ոչ-պաշտօնական տուեալների համաձայն՝ այն տատանւում է 5-8000ի միջեւ[2]: Նրանց մեծ մասը տեղափոխուեց եւրոպական երկրներ, ԱՄՆ եւ Քանատա, ոմանք էլ ռազմական գործողութիւնների տաք փուլի աւարտից յետոյ վերադարձան Սուրիա:

Սուրիահայերի համար հայաստանեան ընկերամշակութային կեանքին յարմարուելու խնդիրները բազմաթիւ են: Առաջնային եւ կարեւոր խնդիր է նաեւ նրանց կրթական համարկումը, քանզի դրա յաջող ընթացքը ՀՀում մշտական բնակութիւն հաստատելու գրաւականներից է: Նախադպրոցական, դպրոցական եւ համալսարանական միջավայրն անփոխարինելի միջոց է սուրիահայ մանուկների, պատանիների ու երիտասարդների համար՝ ոչ միայն հայեցի կրթուելու, անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտութիւններ ձեռք բերելու, յետագայում լաւ աշխատանք ու ապագայ ունենալու, այլեւ տեղացիների հետ շփուելու, հայաստանեան հասարակութեանն համարկուելու տեսանկիւնից:

Ըստ Էմիլ Տըրքհայմի՝[3] յարմարում եւ *սոցիալ*ականացում հասկացութիւնները հոմանիշեր են: Ընդունելով, որ սուրիահայերի *սոցիալ*ականացման հերթական փուլն անցնում է նոր հասարակութիւնում, յարմարումը

---

[1] ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, «սուրիահայերի անկիւն, պետական քաղաքականութիւն», http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun, մատչում՝ 26.03.2020:

[2] «Սուրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ նախագահ, փորձագիտական հարցազրոյց, 25 Հոկտեմբեր 2018:

[3] Տըրքհայմը մարդու սոցիալական տարբերակումը բացայայտում է «նորմ-ախտաբանութիւն» առանցքի միջոցով, որտեղ իւրաքանչիւր մարդ որոշակի տեղ է զբաղեցնում (Э. Дюркгейм, *Социология. Ее предмет, метод, предназначение* [Սոցիոլոգիա. նրա առարկան, մեթոդը, նպատակը], 1995, Կանոն հրատ., Մոսկուա, էջ 23-32): Եթէ դիտարկենք հասարակութեան շահերի կամ պահանջմունքների տեսանկիւնից, ապա մարդը - ըստ նորմերի - պէտք է ունենայ պատշաճեցման բարձր մակարդակ, իսկ հասարակութիւնը՝ այդ մարդու նկատմամբ բարձր պատշաճեցնող յատկութիւն, եւ հակառակը (Э. Дюркгейм, "Ценностные и реальные суждения" [Արժէքային եւ իրական դատողութիւններ], *СОЦИС*, Մոսկուա, 2:1991, էջ 109-10):

սահմանում է որպէս կրթութեան ոլորտում անհրաժեշտ հիմնաչափերի իրացում: Սուրիահայերի համարկումը կրթութեան ոլորտում կարող ենք քննարկել նաեւ Հարթմուտ Էսսէրի եւ Ֆրիտրիխ Հեքմանի առաջարկած տիպաբանութեան շրջանակներում, մասնաւորապէս, կառուցուածքային համարկման, որը ենթադրում է սուրիահայերի ներառում հայաստանեան կրթական համակարգ, մշակութային համարկում, որի ժամանակ նրանք իւրացնում են հայ հասարակութեան լեզուն ու հիմնաչափերը, ընկերային համարկում, որի դէպքում խօսքը վերաբերում է այս համակարգում փոխադարձ շփումների մասին[4]:

Սոյն յօդուածում նպատակ ունենք բացայայտել սուրիահայերի՝ հայաստանեան կրթական համակարգին համարկուելու առանձնայատկութիւնները: Ուսումնասիրութիւնն իրականացուել է «Սուրիահայերի սոցիալ-մշակութային յարմարման հիմնախնդիրները ՀՀում» ատենախօսական աշխատանքի շրջանակներում, որում առաջադրուած խնդիրները վերաբերւում էին ՀՀում նրանց յարմարման գործընթացի տարբեր երեսակներին՝ փաստաթղթային, կեցութեան, ընկերային-կենցաղային եւ նիւթական խնդիրներ, լեզուական, կրթական եւ աշխատանքային դժուարութիւններ, տեղի մշակութային հիմնաչափերի եւ աւանդոյթների չիմացութիւն, արժէհամակարգի տարբերութիւններ, հայաստանցիների հետ հաղորդակցութեան բարդութիւններ եւն.: Դաշտային նիւթը հաւաքուել է 2012-18ին անցկացուած հետազօտութիւնների արդիւնքում՝ համադրելով քանակական եւ որակական մեթոդները:

1. Քանակական հետազօտութիւն (2014ին)՝ կիսաձեւայնացուած հարցազրոյցներ սուրիահայերի հետ Երեւանում, Արագածոտնի, Արարատի, Արմաւիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում:

2. Որակական հետազօտութիւն. ա) խորին հարցազրոյցներ սուրիահայերի հետ (2014ին), հարցուողի ընտրութեան չափանիշեր են հանդիսացել սեռը, տարիքը եւ զբաղուածութեան կարգավիճակը: բ) Փորձագիտական հարցազրոյց (2018ին), որը հնարաւորութիւն է տուել լրացնել եւ բազմակողմանի դարձնել ուսումնասիրուած խնդրի շուրջ ստացուած տեղեկատուութիւնը: Փորձագէտներ են հանդիսացել պետական հաստատութիւնների եւ հասարակական կառոյցների ներկայացուցիչներ, ոլորտից քաջատեղեակ մասնագէտներ: գ) Փաստաթղթերի որակական վերլուծութիւն, մասնաւորապէս, առցանց պարբերականների ուսումնասիրութիւն:

Հետազօտական տուեալները համադրուել են նաեւ այլ հետազօտութիւնների տուեալների երկրորդային վերլուծութեան հետ, որոնք, ի թիւս այլ

---

[4] H. Esser, "Does the "New" Immigration Require a "New" Theory of Intergenerational Integration?" *International Migration Review*, 3(38):2004, էջ 1126–59. նաեւ՝ F. Heckmann, W. Bosswick, *Integration and Integration Policies*, European Forum for Migration Studies, Bamberg, 2005, էջ 9:

հարցերի, վերաբերում են սուրիահայերի կրթական խնդիրներին: Յիշեալ ուսումնասիրութիւններն անցկացուել են ՀՀում գործող միջազգային կառոյցների եւ անհատ հետազօտողների կողմից[5]:

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՐԿՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Կրթութեան ոլորտում համարկումը սկսւում է նախադպրոցական հաստատութիւններից. մեծ թիւ են կազմում այն ընտանիքները, որոնց երեխաները յաճախում են համապատասխան կրթական հաստատութիւններ՝ պետական եւ մասնաւոր մանկապարտէզներ (համապատասխանաբար, 42.5%, 2,0%, աղիւսակ 1): Չնայած սուրիահայ երեխաների դպրոց եւ մանկապարտէզ ընդունելութեան դիմումները քննարկուել են արտահերթ, այնուամէնայնիւ, տեղահանուած անձանց մեծ մասի Երեւան քաղաքում կամ դրա մերձակայքում բնակուելու պատճառով՝ Երեւան քաղաքի մանկապարտէզներում անհրաժեշտ թուով տեղերի պակաս կայ[6]:

Աղիւսակ 1. Կրթական հաստատութիւններ յաճախող սուրիահայերը, %

Կրթական հաստատութիւնները	Յաճախում
Պետական մանկապարտեզ	42,5
Մասնաւոր մանկապարտեզ	2,0
Պետական դպրոց	34,0
Մասնաւոր դպրոց	0,0
Ուսումնարան, քոլեջ	2,0

[5] V. Hovyan, "Syrian-Armenians' Issues in Armenia," (https://orbeli.am/en/post/256/2019-07-31/Syrian-Armenians%E2%80%99+Issues+in+Armenia). նաեւ՝ "Syrian-Armenians in Armenia: Problems and Prospects, Open Society Foundations Armenia" (https://www.osf.am/wp-content/uploads/2017/11/Syrian-Armenians-in-Armenia.-Repatriates-or-Refugees-policy-brief.pdf). նաեւ՝ "Assessment of the Situation of Asylum Seeking, Refugee, and Displaced Children in Armenia," UNICEF Armenia, Yerevan 2016 (http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/Situation_of_-Refugee_Children_-Armenia_2016_eng.pdf). նաեւ՝ "Economic Integration of Syrian Armenians in Armenia," Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH, 2017 (EISRA_Needs_Assessment_Report_Final-1.pdf). նաեւ՝ Լ. Տանաջեան, *Սուրիահայերի ինտեգրման փորձառութիւնը Հայաստանում. խնդիրների յաղթահարման մեխանիզմները*, Բաց հասարակութեան հիմնադրամներ-Հայաստան, Երեւան, 2018:

[6] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով հարկադիր տեղահանուած եւ Հայաստանում պաշտպանութիւն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թուականների ռազմավարութիւն» Իրաւական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, (https://www.e-draft.am/projects/679/about) 25-06-2019:

Պետական բուհ	13,0
Մասնաւոր բուհ	2,0

Բացի պետական եւ մասնաւոր մանկապարտէզներից, Երեւանում գործում են նաեւ տարբեր կենտրոններ՝ նախադպրոցական տարիքի երեխաների կրթական համարկմանը նպաստելու համար: Դրանցից են, օրինակ, ամառային նախադպրոցական կենտրոնը Սուրիայից եկած երեխաների համար[7], նաեւ Երեւանի թիւ 1 եւ 21 դպրոցներում բացուած խմբակը՝ նախատեսուած 5-6 տարեկան տեղացի եւ սուրիահայ երեխաների համար[8]:

Երբ մեծ թուով սուրիահայեր ապաստան գտան ՀՀում, 2012ին կառավարութիւնը որոշակի աշխատանքներ նախաձեռնեց նաեւ հանրակրթութեան կազմակերպման ուղղութեամբ: 2018ի տուեալների համաձայն՝ Երեւանի 73 հանրակրթական ուսումնական հաստատութիւններում սովորել է 470, իսկ մարզերի 54 հանրակրթական ուսումնական հաստատութիւններում՝ 174 սուրիահայ աշակերտ[9]: Նկատենք, որ մեր հետազօտական տուեալներով՝ ընտանիքների 34%ն է ունեցել դպրոցահասակ երեխաներ (աղիւսակ 1): Նրանցից շատերը, որոշելով ապագան կապել ՀՀի հետ, մտածել են երեխաներին կրթութեան տալու մասին: 2012ի ուսումնական գործընթացի նախաշէմին կրթութեան կազմակերպման երեք տարբերակ է առաջարկուել նախարարութեան կողմից.-

1. Սուրիահայ երեխաները սովորեն հայկական դպրոցում, որի նպատակով Երեւանի Ստ. Շահումեանի անուան թիւ 1 դպրոցում բացուել են արեւելահայերէնի ուսուցման արագացուած դասընթացներ:
2. Դպրոցների որոշ դասարաններում իրականացուեն արեւմտահայերէնի ուսուցում: Որոշուել է, որ դասագրքերն ու կրթական ծրագրերը բերուեն Սուրիայից, իսկ երեխաներին դասաւանդեն այնտեղից եկած ուսուցիչները՝ գործընթացում ներգրաւելով նաեւ համապատասխան որակաւորում ունեցող արեւմտահայերէնի մասնագէտներ:
3. Սուրիական դասարաններ ստեղծուեն եւ կրթութիւնը շարունակեն սուրիական ծրագրով՝ համադրելով հայկականի հետ: Նման ծրագրով

[7] Կենտրոնը գործում է ՄԱԿի մանկական հիմնադրամի օժանդակութեամբ եւ ֆինանսաւորմամբ (*ՄԱԿ ՓԳՀ մտահոգութեան առարկայ հանդիսացող անձանց աջակցութիւն տրամադրող կազմակերպութիւնների ուղեցոյց*, ՄԱԿ ՓԳՀ, 2015, էջ 57):

[8] Ծառայութիւնն իրականացնում է «Save the children international» հայաստանեան ներկայացուցչութիւնը (նոյն, էջ 56):

[9] ՀՀ Սփիւռքի նախարարութեան 2018ի գործունէութեան հաշուետուութիւն (http://www.mindiaspora.am/res/Hashvetvutyunnner/2018/tarekan/2018_hashvetvutyun_SN.pdf), մատչում՝ 10 Մարտ 2019:

պէտք է սովորեն այն աշակերտները, որոնք մտադիր են յետագայում վերադառնալ Սուրիա[10]:

Արդիւնքում, Երեւանի Նար Դոսի անուան թիւ 14 հիմնական դպրոցում բացւում է սուրիահայ երեխաների համար նախատեսուած «Կիլիկեան» դպրոցը: Արաբերէնով դասաւանդուող դպրոցում 2012-13 կրթաշրջանում սովորել են 1-9րդ դասարանի 265 սուրիահայ երեխաներ, դասաւանդել են Սուրիայից եկած ուսուցիչներ, բազմացուել եւ աշակերտներին տրուել են համապատասխան դասագրքեր: Դպրոցի ստեղծումը նախաձեռնել է Սուրիայում գործող «Կիլիկիա» ԲԿը, ֆինանսապէս աջակցելու խնդիրը ստանձնել է նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Սակայն դպրոցը 2013 կրթաշրջանից այլեւս չի գործել՝ հիմքում ունենալով ոչ միայն ֆինանսական, այլեւ իրաւական պատճառներ: Մեր փորձագիտական հարցազրոյցներից մէկում արձանագրուեց հետեւեալ փաստը.

> Նրանք (Կիլիկեան դպրոցը – Գ.Յ.) չունէին սեփական կնիքը, որ կարողանային ատեստատներ տալ եւն.: Դրա համար խորհուրդ տրուեց, որ մեր դպրոցի շրջանակում ինտեգրուի այդ վարժարանը: Ճիշտն ասած, մենք սկսեցինք դա հարթ կատարել, բայց, ըստ երեւոյթին, այն, որ ինքը չէր կոչուելու տնօրէն, դուր չեկաւ յատկապէս տնօրէնին: Ու, կարծես, ինքը կազմակերպեց, որ դպրոցը փակուի (փորձագէտ, թիւ 14 դպրոցի փոխտնօրէն)[11]:

Սակայն, «Կիլիկեան» դպրոցի նախկին տնօրէնի հետ հարցազրոյցից էլ պարզ դարձաւ, որ այն ի սկզբանէ ժամանակաւոր ծրագիր է եղել, իսկ ֆինանսաւորումը՝ նախատեսուած ընդամէնը մէկ տարուայ համար: Բացի այդ, ծրագիրը չէր նախատեսում սուրիահայերի ներառում հայաստանեան կրթական համակարգ[12] եւ չէր նպաստելու նրանց ընկերամշակութային համարկմանը:

Վարժարանի փակուելուց յետոյ, նպատակ հետապնդելով հիմնական գիտելիքներ ապահովել Սուրիա վերադարձող երեխաների համար, սկզբում՝ որպէս ուսումնական ծրագրի մաս, յետոյ՝ արտադասարանական խմբակի տեսքով չորս տարի շարունակ թիւ 14 դպրոցի տարրական դասարաններում ուսուցանուել է արաբերէն: 2013-14 կրթաշրջանից աշակերտները ցրուել են տարբեր ուղղութիւններով: Ըստ փորձագէտի գնահատականի՝ նրանց մի մասը հեռացել է ՀՀից, միւս մասը՝ տեղափոխուել Երեւանի տարբեր դպրոցներ:

Հանրակրթութեան մատչելիութեան ապահովմանն ու կրթութեան աջակցութեանն ուղղուած բազմաթիւ ծրագրերի իրականացման եւ կենտ-

---

[10] Հրանուշ Յակոբեան, «Ինչպէ՞ս կը լուծուի սուրիահայ երեխաների կրթութեան հարցը», *tert.am*, 22 Օգոստոս 2012:

[11] Գ. Յակոբեան, Դաշտային ազգագրական նիւթեր (ԴԱՆ) 2018, ՀԱԻ, էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիւ:

[12] *Assessment of the Situation of Asylum Seeking, Refugee, and Displaced Children in Armenia*, UNICEF Armenia, Երեւան, 2016, էջ 37:

րոնների բացման հետ մէկտեղ՝ երեխաների կրթական համարկումն ապահովելու նպատակով արտադասարանային պարապմունքներ են կազմակերպուել նաեւ մի շարք դպրոցներում: Փորձագէտը մասնաւորապէս նշում է, որ առաջին տարուանից առ այսօր, եւ յատկապէս, երբ նոր աշակերտներ են ընդունւում դպրոց, ուսուցիչները պարապում են նրանց հետ, որպէսզի կարողանան յաղթահարել ուսողութիւնից, ռուսերէնից եւ այլ դասանիւթերից գիտելիքի ձեռքբերման, արեւելահայերէնի ընկալման դժուարութիւնները: Չնայած ուսուցիչները ոչ-միշտ են ֆինանսական փոխհատուցում ստանում դրա դիմաց, սակայն, տեսնելով սուրիահայ երեխաների յաջողութիւններն ու կրթական համակարգում համարկուելու քայլերը, գոհանում են իրենց աշխատանքի արդիւնքից: Եթէ սուրիահայ շրջանաւարտը դպրոցն աւարտելիս թերանում է արեւելահայերէն գրելու մէջ՝ ունակութիւնները հասցնելով բաւարարի, ապա նրա բանաւոր խօսքն այնքան է զարգանում, կատարելագործւում, որ «ապշեցնում» է ու «հիացնում» ուսուցչական անձնակազմին:

Սրա հետ մէկտեղ, սուրիահայերը բարձրաձայնում են կրթական ծրագրերի տարբերութեամբ պայմանաւորուած խնդիրների մասին: Նախ, որոշ դասանիւթեր նորութիւն են երեխաների համար, օրինակ, ռուսաց լեզուն: Դպրոցական ծրագրից դուրս կազմակերպուող դասընթացներն ամբողջութեամբ չեն կարող լուծել խնդիրը, քանզի դրանք ոչ միայն կանոնաւոր եւ համատարած չեն, այլեւ քչերն են կամքի ուժ ցուցաբերում՝ պահանջուած գիտելիքները իւրացնելու համար: Բնագիտական դասանիւթերի պարագայում գիտական լեզուն անհասկանալի է երեխաների մեծ մասին, ինչն էլ յետագայում խոչընդոտ է դառնում նրանց համար՝ մասնագիտանալու այդ ուղղութեամբ: Մարդասիրական դասանիւթերը չնայած հասկանում, սակայն դժուարութեամբ են վերաշարադրում, իսկ մեծ ծաւալներով դասանիւթի իւրացումն արդէն լուրջ խնդիր է արեւելահայերէնին վատ տիրապետող սուրիահայ երեխաների եւ նրանց ծնողների համար: Եթէ ծնողներից կամ ընտանիքի անդամներից մէկը ժամանակին կրթութիւն է ստացել ՀՀում, ապա հարցը հեշտութեամբ լուծւում է.

> Ո՛չ մեզ մօտ՝ ես, ամուսինս կամ քոյրս, որ այստեղ եկել, սովորել է, ո՛չ էլ երեխաներս, այսինքն՝ աղջիկս էլ, տղաս էլ, ոչ մէկ դժուարութիւն չեն ունեցել լեզուական: Ո՛չ էլ թոռնիկս, որ եկաւ ու այստեղ առաջին դասարան ընդունուեց: Ե՛ւ շատ լաւ սովորում է, ե՛ւ շատ լաւ յարմարուել է: Մենք չունենք էդ հարցը, որովհետեւ, նախ, լաւ հայերէն ենք խօսում, երկրորդ՝ օտար չէ մեզ. հեռուստատեսութեամբ, գրքերով եւն. միշտ էլ կապ եղել ա արեւելահայերէնի հետ (62 տ. կին, ք. Երեւան)[13]:

Ինչպէս ցոյց են տալիս մեր հետազօտութեան արդիւնքները, ՀՀ կառավարութեան եւ այլ կառոյցների կողմից կազմակերպած արեւելահայերէնի

[13] Յակոբեան, ԴԱՆ, 2014:

դասընթացներին մասնակցութիւն է ունեցել միայն հարիւրից մէկը (աղիւսակ 1): Այս ցուցանիշը, իհարկէ, փոքր է՝ հաշուի առնելով այն, որ Սուրիայում հայ աշակերտները, արաբերէնով անցնելով դպրոցական դասանիւթերը, ՀՀ հանրակրթական համակարգում խնդիրներ են ունենում հիմնականում լեզուի վատ իմացութեան պատճառով: Ի տարբերութիւն արեւելահայերէնի, օտար լեզուի (հիմնականում ռուսերէն, անգլերէն) դասընթացներին մասնակցողների թիւը մեծանում է՝ հասնելով 22.0%ի:

Աղիւսակ 1. Կրթական-մասնագիտական դասընթացներին մասնակցութիւնը, %

Դասընթացները	Այո	Ոչ	Ընդամէնը
Արեւելահայերէնի դասընթաց	1.0	99.0	100.0
Օտար լեզուի դասընթաց[14]	22.0	78.0	100.0
Աշխատանքի հետ կապուած վերապատրաստում	13.0	87.0	100.0
Մասնագիտութիւն ձեռք բերելու դասընթաց	4.0	96.0	100.0

ՀԱՄԱՐԿՄԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2012ին ՀՀ կառավարութիւնը քաղաքականութիւն է մշակում նաեւ սուրիահայ ուսանողների կրթութեան մատչելիութիւնն ապահովելու նպատակով: Ինչպէս տեսնում ենք վերեւում բերուած աղիւսակ 1ի տուեալներից, սուրիահայ ընտանիքների 13%ն առնչւում է պետական բուհերի հետ: Նկատենք նաեւ, որ հարիւրից երկու ընտանիքներում երիտասարդները յաճախում են մասնաւոր բուհեր եւ նոյնքան երիտասարդներ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններ: Սուրիայում բուհական ուսումը կիսատ թողած ուսանողներին հնարաւորութիւն է ընձեռնուել նոյն մակարդակից (դասարանից) ուսումը հայաստանեան բուհերում շարունակելու համար: Միւս կողմից, դիմորդների ընդունելութիւնը ՀՀ բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններ իրականացուել է պարզեցուած կարգով[15].

> Ես սկիզբը, որ ասեցի՝ ինչպիսի մասնագիտութիւն ուզում եմ, պտտուեցայ, նայեցի՝ որը լաւ ա, որը լաւը չէ, Երեւանի Պետական Համալսարան ընդունուեցայ: Վերջը ասեցին՝ ինչի՞ մանկավարժական չես դիմում, էնտեղ աւելի լաւ ա: Գնացի, փոխեցի մանկավարժական: Շատ հեշտ էր, ինձ զանգեցին, ասեցին՝ էսինչ թուականին կու գաս, կը յանձնես քննութիւնը, ասեցի՝ լաւ: Գնացի, մի թելադրութիւն տուեցին: Մի երկու օրէն վերջ ասեցին՝ կու գաք, պատասխանները կը վերցնէք: Յետոյ որ գնացի, ասացին, որ ընդունուել եմ (22 տ. կին, ուսանող, ք. Երեւան)[16]:

[14] Դասընթացների 55%ը՝ ռուսերէն, 35%ը՝ անգլերէն, իսկ 10%ը այլ լեզուներով է:
[15] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով»:
[16] Յակոբեան, ԴԱՆ, 2014:

2012-13 կրթաշրջանից սուրիահայ ուսանողների վարձավճարի չափը սահմանուել է ՀՀ քաղաքացիների համար սահմանուած վարձավճարի չափով: Պետութիւնը, գործակցելով բարեգործական կազմակերպութիւնների հետ, իրականացնում է նրանց ուսման վարձավճարների փոխհատուցման քաղաքականութիւն: Սկզբնական շրջանում փոխհատուցումն իրականացուել է ամբողջապէս, այնուհետեւ՝ զեղչերով, ընդ որում, տարէցտարի այդ զեղչային շէմը նուազել է: Օրինակ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը եւ ՀՀ կառավարութիւնը փոխհատուցել են ՀՀ բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում սովորող 280 սուրիահայ ուսանողների 2013-14 կրթաշրջանի ուսման վճարները՝ իւրաքանչիւրը մինչեւ 1/3ի չափով[17]: 2016-17 կրթաշրջանին նոյն ծրագրով փոխհատուցուել է 436 սուրիահայերի ուսման վարձավճարների 70%ը, 2018-19ին՝ 294 ուսանողների վար-ձավճարների 50%ը: 2019-20ին՝ նախատեսուել է վարձը փոխհատուցել միայն 40%ով[18]:

Կրթաթոշակներ են տրամադրուել/տրամադրւում նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերութեան կողմից[19]: Որոշում է կայացուել նաեւ ուսանողական հանրակացարաններում առաջնահերթութեան կարգով համապատասխան սենեակներ ապահովել սուրիահայ ուսանողների համար[20]:

Հետազօտութեան շրջանակներում բացայայտել ենք նաեւ սուրիահայ ուսանողների՝ կրթութեան ոլորտում ունեցած խնդիրները, սակայն ոչ-այնքան դրամական, որքան ծրագրերի տարբերութեան, լեզուական առանձնայատկութիւնների եւ նոր միջավայրին յարմարուելու դժուարութիւնների առնչութեամբ: Ծրագրերի տարբերութիւնը մտահոգութեան առարկայ է դառնում յատկապէս կրթութեան որակի, արդիւնաւէտութեան գնահատման առումով:

---

[17] Հասարակութիւն, «Սուրիահայերի կրթավճարը կը փոխհատուցուի», a1plus.am, Հոկտեմբեր 07, 2013:

[18] Վ. Հովեան, «Սուրիահայերի հիմնախնդիրները Հայաստանում» https://orbeli.am/hy/post/246/2019-07-10/%D5%8D%D5%AB%D6%80%D5%AB%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%20%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4 04 Սեպտեմբեր 2020:

[19] *ՄԱԿ ՓԳՀ մտահոգութեան առարկայ,* էջ 53-54:

[20] Հասարակութիւն, «Կոնկրէտ դպրոցներ՝ սուրիահայերի համար», a1plus.am, 27 Յուլիս 2012:

Ուսումս արաբերէն էր համալսարանում: Երրորդ կուրս վերջացուցի, եկայ հոս ալ երրորդ կուրս նստայ: Հոս, որ հիմա երրորդ կուրս անցնում ենք, առաջին կուրսի մէջ անցել եմ Սուրիայում (21 տ. տղամարդ, ուսանող, ք. Երեւան)[21]:

Ըստ սուրիահայերի՝ ՀՀում կրթութեան համեմատաբար բարձր մակարդակ ապահովում են արեւմտեան կրթական համակարգով աշխատող բուհերը, ինչն էլ բաւարարում է որակեալ կրթութիւն ստանալու նրանց պահանջմունքը՝ միաժամանակ լուծելով լեզուական խնդիրը:

Այնտեղ էլ էր անգլերէն լեզուով, եւ շատ գոհ եմ: Ես Բէյրութ եղած եմ, Մոսկուայի համալսարաններէն ալ քիչ մը գաղափար ունիմ, այստեղի Ամերիկեան Համալսարանը գրեթէ բանով մը չի պակսիր միւս ամերիկեան որեւէ քաղաքի համալսարաններէն: Միայն սկիզբը, որ եկաւ, քիչ մը արեւելահայերէնի եւ արեւմտահ-յերէնի դժուարութիւն ունեցաւ, բայց հիմա արդէն իրենց պէս արեւելահայերէնը բաւական չափով կը խօսի տղաս» (71 տ. տղամարդ, ք. Երեւան)[22]:

Կրթութեան արդիւնաւէտութեան ցուցանիշ է դիտարկւում նաեւ գիտելիքի ստուգման հարցում ուսուցիչների, դասախօսների առարկայական մօտեցումը, որը թոյլ է կամ շատ դէպքերում բացակայում է: Պատճառը ստեղծուած իրավիճակում սուրիահայ աշակերտներին եւ ուսանողներին ինչ-որ կերպ օժանդակելու նրանց ցանկութիւնն ու պատրաստակամութիւնն է, ինչը հակառակ արդիւնքի է յանգեցնում՝ արհեստական գնահատականներով «խաբելով» նրանց գիտելիք ստանալու գործընթացի մէջ: Այս առումով դիպուկ է յատկապէս հարցուողներից մէկի խօսքերը.

Քիչ մը՝ որպէս սուրիացի, խղճալու, մեղքնալու դէպքեր եղեր են, բայց քիչ մըն ալ էտի ժխտական ազդեցութիւն կը թողնի՝ ամենաթողութիւն կը ստեղծէ: Հիմա ես շատ ընկերներ ունիմ, որ ունին աշակերտներ՝ 9րդ, 11րդ, 6րդ, ամէն դասարանէն: Ուրախ են փոքրերը: Ասում եմ՝ ինչու՞ ուրախ էք, ասում են՝ մեզի շատ դաս չկայ: Մէջները թուլութիւն ստեղծել են, ընծայել են իրենց, որ իբր իրենք շատ դժուարութիւն ունեցեր են լեզուն ընկալելու հարցում, ոչինչ, որ քիչ մը չեն սորվիր, թերանա՝ իմաստ մը չունի: Բայց դա լաւ չէ, ժամանակի կորուստ է (56 տ. տղամարդ, ք. Երեւան)[23]:

Նոյն խնդրին անդրադարձել է նաեւ ՄԱԿի մանկական հիմնադրամն իր զեկոյցում՝ նշելով, որ դրական խտրականութեան այդ դրսեւորումները երկարատեւ հեռանկարում բացասական ազդեցութիւն կարող են ունենալ սուրիահայ երեխաների կրթական մակարդակի եւ, ընդհանուր առմամբ, ապագայի վրայ[24]:

Դպրոցական եւ համալսարանական միջավայրն անփոխարինելի միջոց է սուրիահայ պատանիների ու երիտասարդների համար հայաստանցիների հետ հաղորդակցուելու առումով, սակայն այս գործընթացում որոշ խո-

---

[21] Նոյն:

[22] Նոյն:

[23] Նոյն:

[24] *Assessment of the Situation of Asylum Seeking*, էջ 38:

չընդոտներ կարող են լինել՝ լեզուական եւ արժէհամակարգային տարբերութիւնների պատճառով, ինչպէս նաեւ կարծրատիպերի, որոնք ազդում են նրանց ընկալումների եւ յարաբերութիւնների վրայ: Այդ հաղորդակցութիւնը, մի կողմից, կարող է բերել միմեանց ճանաչման եւ ընդունման, միւս կողմից, սուրիահայերի օտարման ու մեկուսացման: Մեր հետազօտութեան արդիւնքները վկայում են այս երկու երեւոյթների մասին, որոնք տարբեր մակարդակներով առկայ են կրթական միջավայրում.

> Երեւանցի կուրսեցիներիս հետ շփումը էդքան բարձր չեմ կարայ ասեմ: Ես որ մի բան եմ ասում կամ իմ լեզուով եմ խօսում, շատ չեն հասկանում ինձ, բայց հիմա սկսել են հասկանալ: Բայց էնպէս չի, որ վատն են երեխէքը. շատ լաւն են, շատ ջերմ, մի բանի օգնութիւն ունենամ, ինձ օգնում են: Ասում են՝ կարիք ունես, քեզ կ'օգնենք դասերու մէջ (22 տ. կին, ուսանող, ք. Երեւան)[25]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձելով ամփոփել առաջադրուած խնդրի վերլուծութիւնը՝ նշենք, որ 2012ից իվեր ՀՀ կառավարութեան կողմից որոշակի քայլեր են իրականացուել սուրիահայերի կրթական համարկմանը խթանելու համար.

- «Կիլիկեան» դպրոցի բացում, որը գործել է ընդամէնը մէկ ուսումնական տարի,
- Երեխաների ներգրաւում հանրակրթական հաստատութիւններ,
- Բուհ ընդունուելու դիւրին քայլերի մշակում,
- Բուհական համակարգում ուսման վարձավճարների զեղչման քաղաքականութիւն,
- Արեւելահայերէնի եւ ռուսաց լեզուի արագացուած դասընթացների կազմակերպում[26]:
- Սուրիայում ստացած 12ամեայ կրթութեան թէ համալսարանական վկայականների ճանաչում:

Սրա հետ մէկտեղ, ներառուած լինելով հայաստանեան կրթական համակարգ, սուրիահայ աշակերտներն ու ուսանողները յարմարուելու դժուարութիւններ ունեն հիմնականում՝ ճանաչողական (cognitive) եւ հաղորդակցական գործօնների պատճառով: Եթէ տեղացիների հետ հաղորդակցութեան հարցը ժամանակի ընթացքում կարգաւորւում է, ապա ճանաչողական մակարդակի խնդիրները շարունակում են ուղեկցել նրանց:

ՀՀ այժմու կառավարութիւնը 2018-22՝ համարկման ռազմավարութեան մէջ դեռեւս առկայ կրթական խնդիրների լուծման համար ուղենիշ է սահմանել, մասնաւորապէս.-

1. Տեղահանուած անձանց լեզուամշակութային համարկման խնդիրների լուծմանն աջակցութիւնը,

---

[25] Նոյն:

[26] Տե՛ս նաեւ՝ *Համառօտ տեղեկանք սուրիահայերի հիմնախնդիրների մասին*, ՀՀ Սփիւռքի նախարարութուն, Երեւան, Մայիս 2014:

2. Առկայ աղբիւրների սահմաններում մանկապարտէզների սահմանափակ կարողութիւնների հզօրացումը նախադպրոցական տարիքի երեխաների համար,

3. Դպրոցական տարիքի երեխաների համար միջնակարգ կրթութեան, իսկ դիմորդների եւ ուսանողների համար բարձրագոյն կրթութեան մատչելիութեան ապահովումը,

4. Անվճար հիմունքներով կամ զեղչերի կիրառմամբ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական եւ բարձրագոյն կրթութիւն ստանալու հնարաւորութիւնների մատչելիութեան ապահովումը,

5. Տեղահանուած ուսանողների (յատկապէս խոցելի ընտանիքներից) ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցման ծրագրերի իրականացումը (գործընկեր կառոյցների համաֆինանսաւորմամբ)[27]:

THE ROLE OF EDUCATION IN INTEGRATING SYRIAN ARMENIANS IN THE ARMENIAN POLITY OF THE REPUBLIC OF ARMENIA

(Summary)

GAYANE HAKOBYAN (gayik20@gmail.com)

Due to the intense fighting and civil war in Syria, some 20,000 Syrian Armenians have taken refuge in the Republic of Armenia during the last decade. Currently there are around 8-10,000 Syrian Armenians in Armenia.

The paper highlights the core difficulties most of the Syrian Armenian refugee students have faced in enrolling in the educational system of Armenia. The difficulties have been due to differences in a) the language of instruction (Arabic vs. Armenian), b) language of communication (Western vs. Eastern Armenian), c) curriculum (Syrian vs. Armenian).

The paper analyses the integration process of the Syrian-Armenian refugees in Armenia and assesses the steps taken by the government to reduce the difficulties at all levels of education. However, obviously the steps taken have not given the results expected. The paper concludes that while the issue of communication with locals has been resolved over time, the cognitive-level problems - differences in educational programs and language features - continued to be a hindrance.

[27] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով»: